«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2023 թվականի _____ ___-ին

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դ1) կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2023 թ. ---------- -----

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2023 թվականի _____ ___-ին

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ օրենք) 20-րդ հոդվածի 2-րդ մասի 22-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 47.2-րդ հոդվածով.

«**Հոդված 47.2. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, դրանցով զբաղեցված հողերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման առանձնահատկությունները**»

«1. Հայաստանի Հանրապետության մարզերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում, ինչպես նաև նորահայտ հուշարձանների ցուցակներում ընդգրկված, պետական սեփականություն համարվող հանրապետական կամ տեղական նշանակության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքների հողերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցումները կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ լիազոր պետական մարմնի), ինչպես նաև անշարժ գույքի պետական ռեգիստրի նախաձեռնությամբ կազմված և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ու համապատասխան համայնքի հետ համաձայնեցված՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետ՝ հուշարձանների) զբաղեցրած տարածքների հատակագծերի և պահպանական գոտիների նախագծերի հիման վրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հուշարձանների զբաղեցրած տարածքների հատակագծերի և պահպանական գոտիների նախագծերը կազմելու համար հիմք են ընդունվում անշարժ գույքի պետական ռեգիստրի ստեղծած կամ կազմած օրթոֆոտոհատակագծերը (օրթոլուսանկարները):

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատակագծերի կամ պահպանական գոտիների նախագծերը կազմում և համաձայնեցման է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտ նախարարությունը: Ներկայացված փաստաթղթերը համաձայնեցվում են միայն էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով:
4. Անշարժ գույքի պետական ռեգիստրը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝

հուշարձանի և դրա զբաղեցրած տարածքի հատակագծի կամ պահպանական գոտիների նախագիծը՝ համադրված օրթոֆոտոհատակագծերով (օրթոլուսանկարներով), էլեկտրոնային տարբերակներով (Փի Դի Էֆ (PDF) ֆորմատի նիշքերով) տրամադրում է համապատասխան համայնքին, ինչպես նաև տեղադրում է անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային ծառայությունների մատուցման e-cadastre.am կայքէջի հատուկ բաժնում: Համայնքի ղեկավարը սույն մասում նշված փաստաթղթերն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, անշարժ գույքի պետական ռեգիստր են ներկայացնում գրավոր համաձայնություն կամ առարկություն՝ առարկության դեպքում տալով նաև առաջարկություն: Չհամաձայնեցված նախագիծը ներկայացված առաջակության հետ պետական ռեգիստրը վերադարձնում է լիազորված պետական մարմնին հատակագիծը կամ պահպանական գոտիների նախագիծը լրամշակելու համար: Հուշարձանների լիազորված պետական մարմինը չհամաձայնեցված հատվածների համար՝ համայնքի ղեկավարի առաջարկությունն ընդունելի համարելու դեպքում, կազմում է հուշարձանի և դրանց զբաղեցրած տարածքի նոր նախագիծ և կրկին ներկայացնում համաձայնեցման: Հակառակ դեպքում՝ պետական լիազոր մարմինը համապատասխան հիմնավորմամբ՝ վերստին համաձայնեցման է ներկայացնում նախագծի նախնական տարբերակը:

5. Հուշարձանների և դրանց զբաղեցրած տարածքների հատակագծերի նախագծերի վերաբերյալ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում գրավոր համաձայնություն կամ առաջարկություն չներկայացվելու դեպքում նախագիծը համարվում է համաձայնեցված:
6. Անշարժ գույքի պետական ռեգիստրը հուշարձանի և դրա զբաղեցրած տարածքի համաձայնեցված նախագիծը կամ պահպանական գոտիների նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, միջոցներ է ձեռնարկում համապատասխան հուշարձանի և դրա տարածքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման ուղղությամբ:
7. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գույքերի պետական գրանցման վրա չեն տարածվում սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնները:
8. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գույքերի պետական գրանցման դեպքում որպես գույքի հասցե նշվում են հուշարձանի գտնվելու վայրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված համապատասխան մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի տվյալները, պետական ցուցիչը և հուշարձանի անվանումը:»:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի «բացառությամբ

գյուղատնտեսական նշանակության» բառերից հետո լրացնել «և պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններով զբաղեցված» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2023 թ. ---------- -----

Երևան